ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմիի 1

N 715-Ա « 05 » մարտի 2025 թ.

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՒՄԲ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ՍԱՀՄԱՆԱԼԵՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի բացօթյա փառատոնի (Yerevan Open Air Fest) շրջանակում միջոցառումների կազմակերպման աշխատանքները պատշաճ կատարելու համար, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 7-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությունը և 12-րդ կետի 2-րդ ենթակետը՝

1. Ձևավորել մասնագիտական խումբ՝ հետևյալ կազմով.

Լևոն Հովհաննիսյան - Երևանի քաղաքապետի տեղակալ (խմբի ղեկավար),

Գոշ Սարգսյան - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետ,

Լուսինե Դայան - Երևանի քաղաքապետի խորհրդական:

2. Սույն որոշման 1-ին կետով ձևավորված մասնագիտական խմբին՝ իրականացնել գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պատասխանատու ստորաբաժանման գործառույթները:

3. Մասնագիտական խմբին վերապահված փաստաթղթերը համարվում են ստորագրված, եթե առկա է մասնագիտական խմբի ղեկավարի և մասնագիտական խմբի անդամների ստորագրությունները:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել մասնագիտական խմբի ղեկավարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ